

միշտ կռուի մէջ են մէկմէկու զետ՝  
բնութեան կամ օտար ազդեցութեանց  
դէմ, յարմար ըլլան ընդդիմակալու-  
թեան, և կը պատերազմին ծայրագոյն  
արիութեամբ պաշտպանելու իրենց  
հոյրենեաց անկախութիւնն։ Այսպիսի  
են Աֆղանք, որոնք ինդուի և Գանգէ-  
սի գաշտավայրին վրայ Հնդկաց նման  
թոյլ և յոյլ կ'ըլլան, սակայն իրենց  
ծննդական լեռներէն կը ստանան այն  
կորովն, զոր կը հոչակեն պարսկական  
առասպեք և արաբական երգերը։

Բայց այս տեղ պէտք է աշխարհա-  
զրութիւնը թողու իր գերը քաղաքա-  
դիտութեան. վասն զի կրնար ըսել  
թէ ինչ կը պատրաստուի Ափոյ այն կե-  
դրոնին մէջ, որ այնչափ պատմական  
մեծամեծ արարուածոց հանդիսարան  
եղած է։ Միայն պէտք է որ աշխարհա-  
զրութիւնը մտադրութեամբ բանակաց  
հետոցն հետևի, որպէս զի կարող ըլ-  
լայ մեծամեծ օգուտներ քաղել գիտու-  
թեան։ Մտածենք որ եթէ այս անկլո-  
ռուս դարական մրցութիւնը չըլլար,  
կեդրոնականն Ասիա դեռ ևս խորհը-  
դաւոր փակ գիրը մը կ'ըլլար գիտու-  
թեան համար, մինչդեռ հիմայ աշխար-  
հագիրք, երկրաբանիք և հնախօս պատ-  
մարանք արդէն սկսեր են կարդալ՝ ի-  
բրև բաց զրոց մէջ ազդարանական  
ծագմանց վիճարաննեալ գաղտնիքը<sup>1</sup>։

4 Հնդկաց օրագիր մը լուր կու տար ան-  
ցեալ հոկտեմբերի մէջ, թէ Աֆղանստանի  
Էմիրն հրաման հաներ է որ՝ Հայք և Հրէաքք՝  
որոնք իր տէրութեան մէջ կը բնակին, և  
մինչեւ հիմայ աղաս էին զինուորական ա-  
մեն ծառայութենէ, այսուհետեւ անոնք ալ  
հաղորդակցին պատերազմական տրոց, որ-  
պէս զի այս կերպով մասնակցին երկրին  
պաշտպանութեանը ծանրութեանց։

Միանգամայն այլ տեղեկութիւններ կու  
տաց նոյն օրագիրը Աֆղանստան բնակող  
Հրէից վրայ, Ասյրենի լեզուն զոր կը գործ-  
ածեն Աֆղանստան բնակող Հրէաքք, որոնց  
թիւն անձնանօթ է, պարսկէրէնն է. ընդ-  
հանրապէս այս լեզուն կը գործածեն Աֆ-  
ղանստանի կիրթ զասը, որ երբեմն Պար-

## Պ Ա. Դ Ո Ւ Մ

Սկ ծովուն գրեթէ արևելեան վեր-  
ջին ծայրը կանգնուած է Պադում փո-  
քրիկ քաղաքն՝ ընդարձակ հովտի մը  
մէջ։ Ասկէ 20 տարի առաջ և ոչ քա-  
զաք անունը կը վայէր անոր տալու,  
վասն զի կը բաղկանար քանի մը ցա-  
ծուն անշահ փայտեայ շինութիւննե-  
րով և նեղ ու ծամածուու ճամբաննե-  
րով, ինչպէս որ ալ է հիմայ հին Պա-  
դում ըսուած տեղը։ Եւ որովհետեւ նոյն  
կողմի ծովերը միշտ կ'ալեկոծին արևմը-  
տեան և հիւսիսային հովերով, Պադումի  
առևկ Գուռուշն-պաշի ըսուած ցամաքի  
լեզու մը դէպ ՚ի արևմուտք և հիւսիս  
ծովը մտած ըլլալով, ներսը բաւական  
ընդարձակութեամբ շատ ապահով նա-  
ւահանգիստ մը կը կազմուի, որուն նը-  
ման Սկ ծովու հարաւային կողմը՝ նե-

սից թագաւորութեան կը հպատակէին։  
Հրէից նշանաւոր հասարակութիւններն են  
՚ի Քապուլ, Ղանտահար, Ղիզնէ, Հերադ  
և Պալխի։ Քապուլի մէջ կը գտնուին ժողո-  
վըրդանոցի (սինակոկա) մը աւերակներն,  
զոր տէղացի Հրէաքք կը համարին թէ կան-  
գնուած ըլլայ ՚ի ժամանակ թագաւորու-  
թեան Նաբուգոզոնոսորայ արքային Բարե-  
լոնի։ Վասն զի նոյն ժամանակը կար ՚ի Քա-  
պուլ Հրէական հասարակութիւն մը։ Ասոնց  
արարողութիւնը շատ կը տարբերի իրենց  
կրօնակից արեմ. մտեայ եղբարց արարողու-  
թիւնն։ Կընդունին իրենց կրօնական գը-  
րեանքը ըստ մեծի մասին Դեհրանէն։

Հայք ինչպէս ուրիշ ազգի քրիստոնեայք,  
որոնք Աֆղանստան կը բնակին, թոյլտու-  
ութիւն չունին հրապարակական եկեղեցի  
կանգնելու, եկեղեցական պաշտամունք  
կատարելու, և քահանայք ծալտեալ կ'ա-  
պրին. անոր համար նախնի քրիստոնէից  
նման գաղտնի և տուներնուն խորերը Կը  
կատարեն աստուածային պաշտամունքը։  
Նոյնպէս արգիլեալ է քրիստոնէից միավա-  
րել, այլ միայն իշու վրայ կրնան նստիլ։

զուցէն գուրս՝ ուրիշ նաւահանգիստ մը չկայ պյաջափ ապահով, մանաւանդ խորութեամբը, ուր մեծամեծ նաւեր, մինչև պատերազմական վիթխարի նաւեր, ցամաքէն 7 կամ 10 մէջը հեռաւորութեամբ կրնան կենալ: Ռւստի այսու մասամբ շատ մեծ կարեղութիւն պէտք էր ունենար Պատում: և թէ որ հեռաւոր ու մօտաւոր քաղաքաց հետ հաղորդակցելու համար կառուղի կամ երկաթուղի շինուէր, առաջին կարգի քաղաք մը կ'ըլլար վաճառականութեամբ Պատում: Այս բանս ժամանակին խորազնին աչք մը կրնար տեսնել. անոր համար ասկէ 25 տարի առաջ Ղրիմու պատերազմին ատեն դաշնակից տէրութեանց նաւահանգիստն եղած էր, և պատերազմէն վերջը օսմանեան աէրութիւնը տեսնելով Պատումի զրից կարեղութիւնը սկսաւ այն տեղ գալ բնակել ուղղողաց ձրիաբար կամ չնշն գնով հող տայ պայմանաւ որ քաղաքը շնչունեն: Անոր համար նոյն ժամանակները բառական անձինք, շատերը մահմետականք, հող տախն և նոր շինութիւններ կանգնեցին, լայն ու շիտակ ճամբաներ բացին, որով հիմայ զգալի կերպով կը զանազանի նորն հին Պատումէն, թէպէտ և մէկմէկու հետ միացած ըլլան: Հանդերձ այսու երբ քաղաք մը հաղորդակցութիւն չունի ուրիշ քաղաքի մը հետ, կամ շատ գըժուարաւ երթևեկութիւն կ'ըլլաւի, որ քան առաւելութիւն ալ ունենայ՝ ոչ ինչ է. այսպէս ալ Պատում, թէպէտ զգալի կերպով առաջ գնաց Դրիմու պատերազմէն ետքը, սակայն չունեցաւ այն կարեղութիւնն որ իրեն կը պատկանէր. և թէերևս բոլորովին մոռացութեան մէջ կը մնար, թէ որ վերոյիշեալ պատերազմէն վերջը ուռասական ընկերութիւնը Ան ծովու Թուրքիոյ մասին մէջ շողենաւուց երթևեկութիւնն հատատած շըլլար: Եւ ինչպէս վերագոյն բինք, Սև ծովուն հարաւային վերջին ծայրը գտնուելով Պատում, և սահմանագլխուն մօտ, ուռասական ընկերութիւնն իր շոդենաւուց կայարանն ըրաւ-

նաւահանգստին ապահովութեանն համար. ասով քիչ շատ սկսաւ Պատում վաճառաշահ քաղաքաց կարգն անցնիլ, և շողենաւուց մէկ կողմանէ Ռուսիային միւս կողմանէ Թուրքիային շարունակ ու ստէպ ստէպ գալովին ու երթալովիը իր կացութեան մէջ շարժմանկը ստացաւ: Որովհետեւ Ռուսիա այս կողմի սահմանագլխուն մօտ նաւահանգիստ մը չունի, և որչափ ալ Փոթի ըսուած տեղուցն վրայ շատ ծախը ընելով աշխատեր էր նաւահանգիստ մը շինել, բայց միշտ անյաջող զնացեր էր և բոլոր մեծամեծ գումարներնի զուր վատներ էր, անոր համար արդէն առաջուց ու նեցած աչքը նորէն դարձուց Պատումի վրայ, որուն տիրանալովն ամեն դժուարութեանց կը յազմէր: Վամն զի նաւահանգիստն ապահով, զիրքը լաւ, սահմանագլխուն մօտ. անկէ երկաթուղի մը շինելով մինչեւ փոթի, ուր կցելով զայն Փոթի-թլիֆիս երկաթուղուն հետ մինչեւ ուռասական պետութեան խորեր հաղորդակցութիւն կրնար ու նենալ: Անոր համար Ռուսիա սկսաւ ետևէ ըլլալ տիրանալու Պատումի, ժամանակ մը երկաթուղի շինելու պայմանաւ, ժամանակ մը ստակով գնելու, վերջապէս ինչ և իցէ միջոցով որ կը ռնայ ձեռք ձգելու զայն: Խսկ Թուրքիա տեսնելով ուռասական տէրութեան այս տեղուցն վրայ ունեցած մոտածութիւնն, ինքն ալ աւելի ուշադրութիւն դարձուց, և ըմբռնելով այս քաղաքին կարեղութիւնը և ապագային մէջ բռնելիք գիրքը, սկսաւ մեծ ծախսիք ապահովը լուսական կարտ կոյցներ շինելով և մեծաքանակ բազմամթերք ամբարելով. այս պատճառաւ գրեթէ Պատում եղաւ Սև ծովու հալաւային կողմի ծովեղերեսյ քաղաքաց ամբադոյնն և երկրորդն յետ Տրավիզնի վաճառականութեամբ և երթեկութեամբ:

Վերջին արևելեան պատերազմին առաջին կարգի նպատակներէն մէկն ալ Պատում էր, Ռուսիայ տէրութեան կողմանէ. և թէպէտ զինու զօրութեամբ

կարող չեղաւ ձեռք բերել զայն , սաւ կայն վերջապէս Ալյատէ ֆանոյի դաշնա զրութեամբ և Գեղովնի աւագաժողովին վճռով՝ Ռուսիոյ արուեցաւ այս կարենոր քաղաքն , ուր զինուորական հանդիսով մտան Ռուսիոյ այս տարի , 25 օգոստոսի ըստ հին տօւմարի , և յանուն Աղջքանդր Բինքնակալին Ռուսիոյ տիրեցին քաղաքին :

Պատում շինուած է ընդարձակ հովտի մը մէջ , որ մեն դիւրութիւն կ'ընծայէ քաղաքին ընդարձակուելուն որչափ որ կ'ուղուի : Այս հովիտը կը սկսի ձորոխ գետէն , և կը հասնի մինչև Պատում երեք ժամու ճանապարհաւ , առանց ունենալու ամենափոքր դարուվիր մը , և անկէ մինչև Սարայ-սուի ըսուած տեղը մէկ ժամ նոյն կերպով կը շարունակէ . իսկ դէպ ի՞ներ՝ խորութիւնը շատ եղած տեղը մէկ ժամ և շատ տեղ ալ հազիւ մէկ քառորդ ժամու կը քչէ , հետևակ քալելու վրայ հաշուելով . թէպէտ մինչև այժմ և ոչ մէկ կողմանէ երթևեկութեան համար քիչ դիւրին ճամբայ մ'ալ ըլլայ՝ շինուած չէ . բայց արևմտեան կողմն ըլլալով ձորոխ գետը , բաւական կ'օդնէր վաճառականութեան և երթևեկութեան , նաւարկելով մինչև Արդուին , և անկէ ալ երթալով ցամաքէն մինչև Արտանուշ , Արտահան և ինչուան Ղարս . թէ և այս երդի քաղաք քիչ երթևեկութիւն կ'ըլլար այս կողմէն , պատճառն ճանապարհի դժուարութիւնն էր . որով շատերը աւելի կ'ընտրէին Տրապիզոնի ճամբով Ղարս երթալ , որ աւելի երկայն է :

Պատումի նաւահանգիստն , ինչպէս վերագոյն ըսինք , իր բնական դրիւժն ամենապահով է ամեն հովերու դէմ և ընդարձակ . թէ որ քիչ մ'ալ արուեստն օգնէ , առաջին կարգի նաւահանգիստ և նաւահանտոյց կ'ըլլայ . իսկ քաղաքին ընդարձակութեանն համար չափի դրուիք , որովհետեւ միակերպ հովտի մը մէջ մարդ կրնայ առաջ երթալ :

Պատումի օգը ընդհանրապէս ծանր և տենդային կը համարուի , բայց այնպէս չէ . թէպէտ կարելի է ժամանակ

ժամանակ մանր տենդեր յառաջ գան , սակայն աւելի կը պատահի այն անձանց , որոնք ստամբէսնին մաքուր չեն պահեր , կամանձրէն ու արևէ չեն դուշնար . ապա թէ ոչ , նոյն տենդն ուրիշ քաղաքը ալ կընայ պատահիլ եթէ բզգուշութիւն ըլլուի . Հարաւային կողմը միշտ կը մնան բացեալ ջրեր , թէ ամառը և թէ ձմեռը , որոնց մէջ անհամար գորտեր կը վիստան , և իրենց կարկաներով ականջ կը խացընեն . թէ որ օդուն վրայ փոքր կասկած մը կայնէ , այս ջրերն են պատճառ . որոնք եթէ ցամքին կամ արուեստը ցամքեցունել տայ զանոնք , բողորովին ապահովութիւն կ'ըլլայ առողջապահական մասն :

Թէպէտ Պատումի դիրքը գաշտային է , բայց անգամ մը գաշտը լիննալուն՝ կը սկսին լազիստանի լեռները բարձրանալ հետովետէ թէ արևելեան կողմէն և թէ հարաւային կողմէն . այնպէս որ անձրէ սկսելուն՝ օրերով կը տեսէ անընդհատ , և քաղաքը ցած դրից վրայ ըլլալով ու գետինը աւաղ և խիճ ու գարուվեր կամ դարուվար չունենալուն , քիչ մը անձրէնով բոլոր փողոցները ջրով կը մանան . սակայն երկար ժամանակ են մնար այն ջրերը , գետնի աւաղը մէկէն կը ծծէ զանոնք և անձրէը գաջրածին պէս մէկէն ջրերն ալ կը ցամքին . իսկ ճահիճները քիչ մը աւելի ցած ըլլալով՝ ջրերը միշտ ընացեալ կը մնան : Եւ որովհետև քաղաքին փողոցներն բոլորն ալ զրեթէ աւաղ ու խիճ են , անոր համար ցեխ ըլլար , ամառն ալ տաքութիւնն աւելի շատ է քան ծրապիզն , և ձմեռն ալ անարև օրը սաստիկ ցուրտ կ'ընէ . իսկ արել քիչ մը տեսնուածին պէս զդալի փոփոխութիւն կու գայ եղանակին վրայ :

Պատում հիմնյ Ռուսիոյ ձեռքն ազատ նաւահանգիստ մը պիտի ըլլայ , և կը յուսացուի որ շատ մեծ յառաջադիմութիւն լինէ . յետ որոյ շինուին երկաթուղիքն , անմիջապէս մէկ կողմանէ պիտի կցուին թիֆլիզու գծին հետ , միւս կողմանէ պիտի երթան Արդուին . Ար-

տանուչ, Արտահան և Ղարս. առա. ջին գիծը հարաւային թուսիոյ հետ պիտի հաղորդակցի, երկրորդ գիծը մինչ շե Պարսկաստան պիտի ձգուի. Մեծ ու կարևոր քաղաք մը պիտի ըլլայ Պադում և երևելի նաւահանգիստ մը Սև ծովուն վրայ ՚ի մսաս Տրապիզոնի, որ զուրկ լրացր նաւահանգստէ, և շունենալով երկաթուղի մը գէծ մինչև կարին, և ոչ ունենալու ալ յոյս մը առ այժմ՝ Պադում պիտի առնու Տրապիզոնի առաջին քաղաք ըլլալու պահիւ Ծե ծովու հարաւային ափանցը վրայ. և Տրապիզոն որ իրեն կը քաշէր ոչ միայն ցամաքային մեծ ու փոքր քաղաքաց՝ այլ և Լազիստանու տուրքառը, այսուհետև Պագում ըլլալով ազատ քաղաք ու ապահով նաւահանգիստ, բոլոր Լազիստանու տուր և առին վրայ պիտի տիրէ, առ ինքն ձգելով յաճախորդներ՝ իր դրից պատճառաւն, կամ առաւելապէս անմաքս երկիր մը ըլլալուն համար. Ասոնք առ այժմ հաւանական կարծիք են և հայիներ, և կրնան սխալ ըլլալ. վասն զի թէ որ Ռուսիոյ տէրութիւնը իր երկրին համեմատ բարձր մաքս զնէ, կամ եթէ Խուրբիոյ տէրութեան կողմանէ կամ արտաքին և կամ ներքին ընկերութեամբ Տրապիզոն նաւահանգիստ մը ունենայ, և անկէ մինչև Պարսկաստան երկաթուղի մը շնուռի, այն ժամանակ Պագում կրնայ գոնէ Տրապիզոնի նախանձորդ քաղաք մը ըլլալ. ապա թէ ոչ, Տրապիզոն ընկնելու վտանգի մէջ է իր առաջին վիճակէն.

Հիմայ Ռուսիոյ սահմանագիծը ձորոխ գետը կ'անցնի 8 ժամ' հեռու գէպ ՚ի արևմտաք, բովանդակելով ՚ի մէջն Արդուին, Արտահանուչ, Արտահան մինչև Ղարս:

Տրապիզոնէն ինչուան Պագում 96 մղնէ ծովու ճանապարհաւ, որով բանուկ շղենաւ մը կրնայ 9 ժամուան մէջ կտրել այս հեռաւորութիւնը. բայց ընդհանրապէս 11 կամ 12 ժամ' հաշիւ կ'ըլլուի միջակ քալուածքով. առ այժմ Տրապիզոնէն մէկ շողենաւ մը կը բանի տաճկական ընկերութեան, և ամն ե-

րկօշաբթի կը համնի Տրապիզոն ու հինդշարթի ճամբայ կ'ելլէ դէպ ՚ի Պագում հանդիպելով նաև իրիղէ քաղաքը:

Պագումի բնակիցն են՝ Վիլիք, որոնք կրօնքով մահմետական են, և Աճարացիք՝ որոնք մի և նոյն լեզուն կը խօսին Բուսիոյ մասին մէջ եղող Վրաց հետ, թէ քրիստոնեայք և թէ մահմետականք, որով կ'երեւայ թէ մէկ ազգ եղած պիտի ըլլան, բայց սաստիկ հակառակ են մէկմէկու, ինչպէս տեսնուեցաւ այս վերջին պատերազմին մէջ. բոլոր վրացերէն խօսող մահմետականք զինուուրեցան և պատերազմեցան, ու հաշուութենէ ետքն ալ սաստիկ գէմ դրին չը տալու Ռուսաց ոչ Պագումը և ոչ իրենց բնակած երկիրը, և ւ երբ տեսան որ անհրաժեշտ է Պագումի յանձնուուին առ Ռուսիա, բաւական ընտանիք գաղթեցին ՚ի Թուրքիա. թէպէտ լրացիրները շատ առաւելութեամբ խօսեցան, սակայն 1000 ընտանիքէ աւելի շի կարծուիր. մանաւանդ ուսւական տէրութիւնն հրաման հանեց որ ուղղող կը նայ 8 տարուան միջոցին մէջ վաճառել իր տունը, տեղը, հողն ու արտը և ետքն ելլէ երթայ առանց արգելքի. անոր համար շատերը մնացին և կը սպասեն ապագային, շատերն ալ նորէն ետքարձան. իսկ անոնք որ բոլորովին գաղթեցին՝ ոյնին գնով վաճառեցին իրենց տները, հողերն ու արտերը, և թողուցին իրենց հարց գերեզմանքն ու միայն տան կարավաններէն մէկ տեղ առնելով, այն ալ որքան որ կըցան, նախ Տրապիզոն եկան, անկէ ալ զրկուեցան մօտ տեղուանք՝ բնակութիւն տրուելով անոնց ՚ի կողմանէ տէրութեան Ասոնց մէջ նշանաւոր են Չորրոշ-սուր ըսուած աւանին ժողովուրգն, որոնք թէ սահմանացիսուն մօտ գտնուելով և թէ երկու կողմի պատերազմողք բոլոր իրենց պատերազմական գործողութիւննին այն տեղ կատարելով, արդէն տարի մը առջ գտղթեր էին և քանի մը ամիս վերջն օսմանեան զինուց յաջողութեցն, որով թշնամին սահմանագլխէն անդին

վանուեր էր, և Թուրքը գրեթէ սահմանագլուխն անցեր էին, սկսան բնակչաց շատերն դառնալ նորէն իրենց տեղերը Չուրուք-սուր, ուր պատերազմի պատճառաւ ոչ միայն տուն մը չէր մասցեր կանգուն, այլ և ոչ պտղատու ծառմը. Հազիւ սկսեր էին քիչ մը բնակութիւն հաստատել և շենցունել, մէյմ'ալ Ղարսի առումն վրայ հասաւ, և ռուսական բանակն սկսաւ յաջողութեամբ յառաջ քալել, և այլ աւելի ձմեռն ալ հասնելով՝ օսմաննեան բանակը պատշաճ դատեց թողուլ այն անպատսպար գանուած տեղն ու քաշուիլ իր հին տեղը ձմերելու. որով Չուրուք-սուր կրկին դատարկացաւ՝ երկու բանակաց մէջ տեղը մնալով, անոր համար բնակիչք ալ ստիպուեցան դարձեալ թողլու իրենց երկիրն, Հաշտութեան ժամանակ բաւական անձինք նորէն դարձեր էին, ու սկսեր էին շենցունել. բայց Պաթումի յանձնուելէն ետքն առ Ռուսս կըրկին և անդարձ կերպով ելան իրենց երկիրներէն և գաղթեցին Տրապիզոնի կողմերը.

Իսկ հիմայ Պաթում օր աւուր վրայ բազմամարդանալու հետ է, ամեն կողմանէ կը դիմեն այն տեղ վաճառականք. Հայք, Յոյնք, Վիլք, Երոպացիք, մինչև անդամ ամերիկացիք սկսան վաճառականական տուներ հաստատել, Այս պատճառաւ քաղաքն մէկէն շենցաւ, կիսաւեր բնակարանները նորոգուեցան, և ուրիշ շատ շինութեանց հիմնագումարութիւն կերպարանն առաջին կարգի վաճառաշահ քաղաքց մէկը պիտի դառնայ, վասն զի Ռուսաց կառավարութիւնը Պաթում գալով բերաւ վստահութիւն և ապա-

հովութիւն վաճառականութեան և արուեստից :

Եւ որովհետև առանց երագ ու ապահով հաղորդակցութեան քաղաքն ու նաւահանգիստը այն մեծ կարևորութիւնը չեն առնուր, անոր համար փոթաց Շուսիոյ կառավարութիւնը թէ ծովային և թէ ցամաքային ճարտարապետներ զրկել, որոնք նաւահանգիստը քննեցին, և ցամաքին վրայ հաղորդակցութեան կէտերն որոշեցին Փոթիթիքին երկաթուղուն հետ և դէպ'ին նեղին կողմանց, և կառուղեաց գծերը ծրադրեցին, հիմայ ալ բազմութիւն գործաւորաց խուռն կը դիմեն ժամ մը առաջ այս ճամբաները բանալու, ցեղաց ափշեր մնացեր են իրենց հայրենեաց այս յեղափոխութեանը վրայ, և երազ կը կարծեն եղած կերպարանափոխութիւնը :

Վիհակագրուրիւն ձիոց . — Գերմանացի վիճակագիրք կը համարին թէ երկրիս երեսն ըլլայ 58 միլիոն ձի, առանց հաշուելու ջինաստան ու Ճարոն:	
Այս աշխարհամարին մէջ կ'ընծայեն Բուսիա	21,570,000
Միացած նահանգք	9,504,000
Հասարակապետութիւն Արհեն-	
գինայ	4,000,000
Գերմանիա	3,352,000
Կանադա	2,624,000
Մեծն Բրիտանիա	2,255,000
Հունգարիա	2,179,000
Աւստրիա	1,367,000
Թուրքիա	1,100,000
Գաղղիա	2,500,000
Խոտակիա	1,500,000